ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ՄՏՆԵԼՈՒ ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐ

ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ՄՏՆԵԼՈՒ ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐ

ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ՄՏՆԵԼՈՒ ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐ

Այս գրքույկի համար աղբյուր է հանդիսացել
Բոյդ Ք. Փաքերի *Սուրբ Տաճարը:*

առաջի կազմ. Սոլթ Լեյքի Տաճար
ետևի կազմ. Լեյի Հավայի Տաճար

© 2002 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները պաշտպանված են:
Տպագրված է Գերմանիայում:

Անգլերեն տեքստի հաստատումը. 7/06
Թարգմանության հաստատումը. 7/06
Preparing to Enter the Holy Temple-ի թարգմանությունը
Armenian

Եկեք Տաճար

Կան շատ պատճառներ, որոնց համար մարդը պետք է տաճար գնա: Նույնիսկ արտաքին տեսքը խոսում է տաճարի լուրջ հոգևոր նպատակների մասին: Ավելի շատ դրա մասին վկայում է այն ամենը, ինչը պատերի ներսում է: Տաճարի դռների վրա գրված է. «Սրբություն Տիրոջը»: Երբ մտնում ես նվիրագործված տաճար, գտնվում ես Տիրոջ տանը:

Եկեղեցում մենք տարբեր տեսակի շենքեր ենք կառուցում: Այնտեղ մենք երկրպագում ենք, ուսուցանում ենք, զվարճանում ենք, կազմակերպում ենք: Մենք կարող ենք կազմավորել ցցեր, ծխեր, միսիաներ, քվորումներ, Սփոփող Միություններ ինչպես այդ շենքերում, այնպես էլ վարձակալված սրահներում: Սակայն, երբ ընտանիք ենք կազմում այն կարգով, որը հայտնել է Տերը, մենք կազմում ենք դրանք տաճարներում: Տաճարային ամուսնությունը, այս կնքող արարողությունը, պսակող օրհնությունն է, որը կարելի է ստանալ սուրբ տաճարում:

Տաճարներում Եկեղեցու անդամները, որոնք արժանի են դարձել, կարող են մասնակցել քավող արարողություններից բարձրագույնին, որ երբևէ հայտնվել է մարդկությանը: Այնտեղ, սուրբ արարողությամբ, անձը կարող է լվացվել, օծվել, ուսուցանվել, օժտվել և կնքվել: Եվ, երբ մենք ստանում ենք այդ օրհնությունները մեզ համար, մենք կարող ենք կատարել դրանք նրանց համար, ովքեր մահացել են չունենալով այդ հնարավորությունը: Տաճարներում նույն սուրբ արարողությունները կատարվում են ինչպես ապրողների, այնպես էլ մահացածների համար: Այստեղ է մկրտության ավազանը, որտեղ կենդանի մարդիկ կատարում են մկրտություններ մահացածների համար, ուր արժանի անդամները գործում են որպես փոխարինողներ նրանց համար, ովքեր անցել են վարագույրի այն կողմը:

«Եկեք տաճար»: Եթե ոչ այժմ, ապա շուտով: Աղոթեք ջանասիրաբար, կարգավորեք ձեր կյանքը, խնայեք որքան որ կարող եք այն հույսով, որ այդ օրը կգա: Սկսեք այժմ ապաշխարության այն ճանապարհը, որը երբեմն դժվար և հուսահատեցնող է: Տաճարը փոխում է անհատին և այնտեղ հասնելու համար գործադրված

ցանկացած ջանքլիովին արժեքավոր է դարձնում նրան: Նրանց համար, որոնք տաճարից բավականին հեռու են ապրում, տաճարները նրանց մոտ կգան ավելի շուտ, քան նրանք կգնան տաճար: Պահեք ձեր հավատը և հույսը: Վճռեք, որ կգաք, որ կլինեք արժանի և կգաք տաճար:

Այս բաները սուրբ են

Սուրբ գրությունների մանրակրկիտ ուսումնասիրությունը բացահայտում է, որ Տերը բոլոր բաները չի ասում բոլոր մարդկանց: Կան որոշակի որակներ, որոնք նախապայման են հանդիսանում սուրբ տեղեկություններ ստանալու համար: Տաճարային ծեսերը մտնում են այդ խմբի մեջ:

Տաճարներից դուրս մենք չենք քննարկում տաճարային արարողությունների մասին: Երբեք չի նախատեսվել, որ տաճարային այդ ծեսերի մասին գիտելիքը պետք է տրվի միայն մի քանի ընտրյալների, որոնք պետք է հետևեին, որպեսզի ուրիշները երբեք չիմանան այդ մասին: Իրականում, հակառակն է: Մեծ ցանկությամբ մենք կոչ ենք անում յուրաքանչյուր հոգու արժանի դառնալ և պատրաստվել տաճարային փորձառությանը: Նրանք, ովքեր եղել են տաճարում, սովորել են, որ մի օր յուրաքանչյուր կենդանի հոգի և յուրաքանչյուր հոգի, որ երբևէ ապրել է, հնարավորություն կունենա լսելու ավետարանի մասին և ընդունել կամ մերժել այն, ինչ առաջարկում է տաճարը: Եթե այս հնարավորությունը մերժվի, մերժելու համար պատասխանատվությունը կրում է այդ անձը:

Տաճարի ծեսերը և արարողությունները պարզ են: Դրանք սքանչելի են: Դրանք սրբազան են: Դրանք գաղտնի են պահվում, որպեսզի չտրվեն նրանց, ովքեր պատրաստ չեն: Հետաքրքրությունը պատրաստվածություն չէ: Արարողություններին պատրաստվելը պահանջում է նախնական քայլեր, ինչպիսիք են՝ հավատքը, մկրտությունը, հաստատումը, արժանիությունը, հասունությունը և պատկառանքը, որը վայել է նրան, ով որպես հյուր հրավիրվում է Տիրոջ տուն:

Տաճար գնալուց առաջ մենք պետք է պատրաստ լինենք: Տաճար գնալուց առաջ մենք պետք է արժանի լինենք: Կան որոշակի սահմանափակումներ և պայմաններ: Դրանք հաստատվել են Տիրոջ կողմից, ոչ թե՝ մարդու: Եվ Տերն ունի բոլոր իրավունքները և իշխանությունը պահանջելու, որպեսզի տաճարի հետ կապված հարցերը պահվեն սրբության և գաղտնիության մեջ:

Բոլոր նրանք, ովքեր արժանի են և համապատասխանում են բոլոր պահանջներին, կարող են մտնել տաճար, որտեղ կմասնակցեն սրբազան ծեսերին և արարողություններին:

Արժանի լինել մտնելու

Այն ժամանակ, երբ դուք զգաք տաճարային օրհնությունների արժեքը և տաճարում կատարվող արարողությունների սրբությունը, ապա ավելի քիչ կասկածի տակկդնեք այն բարձր չափանիշները, որոնք Տերը սահմանել է սուրբ տաճար մտնելու համար:

Դուք պետք է գործող երաշխավորագիր ունենաք տաճար մտնելու համար: Այդ երաշխավորագիրը պետք է ստորագրված լինի ձեր ծխի եպիսկոպոսի կամ ձեր ցցի նախագահի կողմից: Միսիայի բնագավառում, իհարկե, տաճարային երաշխավորագրեր տալու պատասխանատվությունը կրում են միսիայի և ճյուղի նախագահները: Միայն նրանք, ովքեր արժանի են, պետք է գնան տաճար: Եպիսկոպոսը պատասխանատվություն է կրում անձնական արժանավորությունը ստուգելու համար: Այդ հարցազրույցը չափազանց կարևոր է որպես Եկեղեցու անդամ ձեզ համար, քանի որ դա հնարավորություն է տալիս Տիրոջ կարգված ծառայի օգնությամբ քննել ձեր կյանքի ուղղությունը: Եթե ձեր կյանքում որևէ բան ճիշտ չի ընթանում, եպիսկոպոսը կօգնի շտկել դա: Այս գործընթացի միջոցով, երբ դուք խորհրդակցում եք Իսրայելի դատավորի հետ, դուք կարող եք հայտարարել ձեր արժանավորության մասին կամ օգնություն ստանալ, որպեսզի արժանի դառնաք մտնելու տաճար Տիրոջ համաձայնությամբ:

Նախագահ Էլդոն Թաները, որը ծառայել է որպես Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական, քահանայության բարձրագույն հավաքին խոսել է հարցազրույցների մասին: Նրա խորհուրդը օգտակար է և Եկեղեցու ղեկավարների համար, որոնք վարում են հարցազրույցը, և անդամների համար, որոնց հետ անց է կացվում այդ հարցազրույցը: Լրջորեն խորհեք այս խորհրդի մասին.

> Ձեր եպիսկոպոսները կամ ցցերի նախագահները տաճարային երաշխավորագրի հարցազրույցը կարող են սկսել այսպես.
>
> «Դուք ինձ մոտ եք եկել տաճար մտնելու երաշխավորագիր ստանալու համար: Իմ պարտականությունն է ձեզ հետ հարցազրույց անցկացնելիս ներկայացնել Տիրոջը: Հարցազրույցի վերջում ես պետք է ստորագրեմ ձեր երաշխավորագիրը, սակայն ձեր երաշխավորագրի վրա իմ ստորագրությունը չէ, որ ամենակարևորն է: Որպեսզի երաշխավորագիրն ուժի մեջ լինի այն պետք է ստորագրեք դուք ինքներդ:
>
> Երբ դուք ստորագրում եք ձեր երաշխավորագիրը, ապա ընդունում եք Տիրոջ առաջ, որ արժանի եք այն արտոնություններին, որոնք տրվում են այս երաշխավորագիրը կրողներին: Կան մի քանի ստանդարտ հարցեր, որոնք ես կտամ: . . . Յուրաքանչյուրին դուք պետք է ազնվորեն պատասխանեք »: . .

Դիմողին բոլոր պահանջվող հարցերը տալուց հետո, դուք կարող եք ավելացնել. «Նա, ով գնում է Տիրոջ տունը, պետք է ազատ լինի ցանկացած *անմաքուր, անսուրբ, արատավոր կամ անբնական գործերից»:* . . .

Մեր հարցազրույցները պետք է անցկացվեն սիրո և համեստության մթնոլորտում: Հաճախ, որոշ բաներ կարելի է ուղղել, եթե հարցնեք. «Կա՞ արդյոք որևէ պատճառ, որի համար ձեր տաճարային երաշխավորագիրը ստորագրելիս ձեզ անհարմար կզգաք կամ անազնիվ կգտնվեք Տիրոջ առաջ»:

«Կցանկանայի՞ք ունենալ որոշ ժամանակ երաշխավորագիրը ստորագրելուց առաջ ձեր անձնական խնդիրները լուծելու համար: Հիշեք, որ Տերը գիտի բոլոր բաները և ծաղրի չի ենթարկվի: Մենք փորձում ենք օգնել ձեզ: Երբեք մի ստեք Տիրոջից կոչում, երաշխավորագիր կամ օրհնություն ստանալու համար»:

Եթե գործին մոտենաք առաջարկված օրինակով, ապա հարցազրույցի պատասխանատվությունը կմնա անդամի վրա: Եպիսկոպոսը կամ ցցի նախագահը իրավունք ունի օգտագործել դատելու զորությունը: Նա կիմանա, թե արդյոք կա որևէ սխալ, որը պետք է ուղղվի նախքան երաշխավորագիր տալը: (“The Blessing of Church Interviews,” *Ensign* [November 1978]: 42–43.)

Տաճարի երաշխավորագրի հարցազրույցը անց է կացվում առանձին՝ եպիսկոպոսի և Եկեղեցու հետաքրքրված անդամի միջև: Այդ ժամանակ անդամին հարցեր են տրվում անձնական վարքը, արժանավորությունը, Եկեղեցուն և Եկեղեցու պաշտոնյաներին նվիրվածությունը պարզելու համար: Այդ անձնավորությունը պետք է հաստատի, որ նա բարոյապես մաքուր է և պահում է Իմաստության Խոսքը, վճարում է լրիվ տասանորդը, ներդաշնակության մեջ է ապրում Եկեղեցու ուսմունքների հետ և չի հարում կամ համակրում ուխտադրուժ խմբերի: Եպիսկոպոսը հրահանգավորված է, որ նշված հարցերի շուրջ հարցազրույցին մասնակցող յուրաքանչյուր անձի վերաբերյալ գաղտնիությունը առաջնահերթ կարևորություն ունի:

Տաճարի երաշխավորագիր ստանալիս եպիսկոպոսի հարցերին տրված ընդունելի պատասխանները, սովորաբար, հաստատում են անձի արժանավորությունը: Եթե դիմողը չի պահում պատվիրանները կամ նրա կյանքում չլուծված խնդիր կա, որը կարգավորման կարիք ունի, ապա տաճարի երաշխավորագիր ստանալուց առաջ անհատը պետք է անկեղծորեն ապաշխարի:

Նախքան տաճար այցելելը, եպիսկոպոսի հետ այսպիսի առանձնազրույց անցնելուց հետո, մեզանից յուրաքանչյուրը պետք է նմանատիպ հարցազրույց անցնի ցցի նախագահության անդամի հետ: Եթե մենք տաճար ենք գնում առաջին անգամ, ապա, որպես կանոն, ցցի նախագահն անձամբ է անցկացնում հարցազրույցը:

Անշուշտ, երբ դուք տաճարի երաշխավորագիր ստանալու համար հարցազրույցի եք ներկայանում, դուք կամենում եք ընդունել նրա դատավճիռը, ով նշանակված է որպես Իսրայելի դատավոր, ով պատասխանատվություն է կրում Տիրոջը ներկայացնելու այդ սուրբ վայրը մտնելու ձեր իրավունքը առաջելիս:

Առաջին և յուրաքանչյուր անգամ

Եթե դուք առաջին անգամ եք գնում տաճար, բնական է, որ փոքրինչ անհանգիստ ձեզ կզգաք: Մենք բնականից անհանգիստ ենք, երբ անհայտ բաների հետ ենք շփվում: Հաճախ մենք նյարդայնանում ենք նոր փորձառություններ ձեռք բերելու ճանապարհին:

Եղեք հանգիստ: Դուք գնում եք տաճար: Ամեն քայլափոխին կլինի ինչ-որ մեկը, որը ձեզ կօգնի: Ձեզ հոգատարությամբ կուղեկցեն. եղեք հանգիստ:

Ներս մտնելով տաճար, մենք պետք է ակնածալից լինենք: Անհրաժեշտ ցանկացած խոսակցություն պետք է շատ ցածր ձայնով արվի: Իսկ ուսուցումների անցկացման ընթացքում մենք պետք է լինենք լուռ և ակնածալից:

Այսօր շատ քիչ վայրեր կան, որոնք խաղաղ ակնածանքի մթնոլորտում խորհելու հնարավորություն են ընձեռում: Որոշ տաճարներ մտնելուց առաջ մինչև արարողության աշխատանքները սկսելը խմբերը հաճախ հավաքվում են տաճարի շենքում գտնվող հավաքատանը: Այստեղ անդամները սպասում են մինչև ամբողջ խումբը կհավաքվի: Մեր առօրյա կյանքում, սովորաբար, սպասողական վիճակը ուղեկցվում է անհամբերությամբ: Այլ պայմաններում, առաջինը սենյակ մտնելը և սպասելը մինչև որ վերջին մարդը ներս կմտնի, կարող է զայրույթ առաջացնել: Տաճարում, դա բոլորովին հակառակն է: Այդ սպասումը հիանալի հնարավորություն է համարվում: Ի~նչ պատիվ է նստել խաղաղության մեջ, առանց խոսակցությունների և գիտակցությունը ուղղել դեպի ակնածալի և հոգևոր մտքերը: Դա հոգու թարմացում է:

Երբ մտնում եք տաճար, հիշեք, որ դուք հյուր եք Տիրոջ տանը: Դա ուրախության ժամանակ է՝ անաղմուկ ուրախության: Երբեմն, տաճարային ամուսնության ժամանակ, ազգականներին և ընկերներին

Սելեստիալ Սենյակ, Վերնալ Յուտա Տաճար

անհրաժեշտ է հիշեցնել, որ սիրո և շնորհավորանքների իրենց արտահայտությունները, ինչպես նաև ողջույնները, ուղղված ընտանիքի այն անդամներին, որոնց երկար ժամանակ չեն հանդիպել, պետք է տրվեն անաղմուկ և մեղմ տոնով: Բարձրաձայն խոսակցությունը և բարձր ծիծաղը պատշաճ չեն Տիրոջ տանը:

Ընդունեք տաճարի աշխատողների ցուցումները: Ձեր գործողությունների ընթացքում ձեզ կուղեկցեն:

Բարձրյալից Ուսուցանվողները

Նախքան առաջին անգամ տաճար մտնելը կամ նույնիսկ շատ անգամներ հաճախելուց հետո, ձեզ համար օգտակար կլինի գիտակցել, որ տաճարների ուսուցումները կատարվում են խորհրդանիշների օգնությամբ: Տերը՝ Գլխավոր Ուսուցիչը, իր հրահանգների մեծ մասը տվել է այս ձևով:

Տաճարը մեծ դպրոց է: Այն սովորելու տուն է: Տաճարներում պահպանվում է այնպիսի մթնոլորտ, որը կատարյալ է հոգևոր լուրջ ուսուցում ստանալու համար: Հանգուցյալ դոկտոր Ջոն Ա. Վիդսոուն՝ Տասերկուսի Քվորումից, համալսարանի պատվավոր նախագահ էր և աշխարհահռչակ գիտնական: Նա մեծ ակնածանք էր տածում դեպի տաճարային աշխատանքը և մի առիթով ասել է.

> «Տաճարային արարողությունները պարփակում են Եկեղեցու ղեկավարների կողմից ժամանակ առ ժամանակ ուսուցանված փրկության ամբողջ ծրագիրը և լուսաբանում են դժվար ըմբռնելի հարցերը: Տաճարի ուսմունքները փրկության ծրագրի մեջ ոչ մի շեղում կամ աղավաղում չեն առաջացնում: Օժտման գաղափարական ամբողջությունը տաճարային արարողությունն ճշմարտացի լինելու հաստատուն փաստերից է: Ավելին, ավետարանի ծրագրի այդ ամբողջական վերանայումն ու մեկնաբանումը տաճարային երկրպագությունը դարձնում է ավետարանի ամբողջական կառուցվածքը մտքում թարմացնելու ամենաարդյունավետ ձևերից մեկը:
>
> Մեկ այլ փաստ որպես տաճարային աշխատանքի ճշմարտացիության ներքին համոզմունք միշտ հրապուրել է ինձ: Օժտումը և տաճարային աշխատանքը, ինչպես հայտնվել է Տիրոջ կողմից Մարգարե Ջոզեֆ Սմիթին, բաղկացած է չորս առանձին բաժիններից՝ նախապատրաստական արարողություններ, պատմողական և ցուցադրական ուսուցումներ, ուխտեր և, վերջապես, գիտելիքների ստուգում: Կասկածում եմ, որ ուսում չստացած և տրամաբանության մեջ անպատրաստ Մարգարե

Ջոզեֆ Սմիթը ի վիճակի կլիներ ինքնուրույն նմանատիպ տրամաբանական ամբողջություն ստեղծել»: (John A. Widtsoe, “Temple Worship,” The Utah Genealogical and Historical Magazine 12 [April 1921]: 58.)

Կրկին անդրադառնանք Երեց Վիդսոուի հոդվածին.

«Մենք ապրում ենք խորհրդանիշների աշխարհում: Մենք ամեն ինչ ճանաչում ենք խորհրդանիշների միջոցով: Մենք նկարում ենք մի քանի նշաններ թղթի վրա և ասում ենք, որ դրանք կազմում են բառ, որը նշանակում է սեր, կամ ատելություն, կամ գթասրտություն, կամ Աստված, կամ հավերժություն: Այդ նշանները հնարավոր է աչքին հաճելի չլինեն: Ոչ ոք չի փորձում սխալներ գտնել գրքի էջերի վրա գրված խորհրդանիշների մեջ, քանի որ դրանք իրենց գեղեցկությամբ բավականաչափ զորեղ չեն, որքան որ այն բաները, որ դրանք ներկայացնում են: Օրինակ, մենք չենք առարկում ԱՍՏՎԱԾ խորհրդանիշի դեմ, պատճառաբանելով, որ այն բավականաչափ գեղեցիկ չէ, որպեսզի խորհրդանշի Աստծո մեծությունը: Մենք ուրախ ենք ունենալու խորհրդանիշներ, եթե միայն, դրանց նշանակությունը մեզ հասկանալի է: Ես խոսում եմ ձեզ հետ և դուք չեք առարկում արտահայտվելու իմ ոճի կամ ընտրած բառերի դեմ: Հետևելով այն մտքերի իմաստին, որոնք ես ձգտում էի ձեզ հասկանալի դարձնել, դուք մոռանում եք իմ օգտագործած բառերը և խոսելու ոճը: . . .

Մենք ապրում ենք խորհրդանիշների աշխարհում: Ոչ մի տղամարդ կամ կին չի կարող դուրս գալ տաճարից պատշաճ ձևով օժտված, եթե չտեսնի խորհրդանիշի ետևում թաքնված զորեղ իրականությունները» («Տաճարի Երկրպագում», էջ 62):

Եթե դուք գնաք տաճար և հիշեք ուսուցումների խորհրդանշական բնույթի մասին, ապա համապատասխան տրամադրվածությամբ տաճար մտնելով դուք միշտ այնտեղից դուրս կգաք ավելի ընդլայնված մտահորիզոնով, ավելի վեհացված զգացմունքներով, հոգևոր բաների մասին ձեռք բերած ավելի մեծ գիտելիքներով: Ուսուցման ծրագիրը սքանչելի է: Այն ոգեշնչված է: Ինքը՝ Տերը, Վարդապետը, Իր աշակերտներին շատ հաճախ սովորեցնում էր առակների միջոցով, այսինքն՝ բանավոր խոսքով, խորհրդանշորեն ներկայացնելով այնպիսի բաներ, որոնք այլ կերպ դժվար կհասկացվեին: Նա խոսում էր իր աշակերտների առօրյա կյանքից վերցված սովորական փորձառություններից, խոսում էր հավերի և ճտերի, թռչունների, ծաղիկների, աղվեսների, ծառերի, կողոպտիչների, ճանապարհի ավազակների, արևի մայրամուտի, հարուստների և աղքատների, բժիշկների, հագուստը կարկատելու, որոմները քաղհանելու, տունը

Պիտակներով Լիսեռով, մաշկեղջյուրի Տանգոյի

ավելու, խոզերին կերակրելու, ցորենը աղալու, շտեմարանների պահուստի, տներ կառուցելու, աշխատողներ վարձելու և բազմաթիվ այլ բաների մասին: Նա պատմում էր մանանեխի հատիկի և մարգարիտի մասին:Նա ցանկանում էր ուսուցանել իր ունկնդիրներին, դրա համար նա խոսում էր հասարակ բաներից, օգտագործելով խորհրդանիշներ: Այս բաներից ոչ մեկը անհասկանալի կամ խորհրդավոր չէ, այնուամենայնիվ դրանք բոլորը խորհրդանշական են:

Տաճարն՝ ինքնին խորհրդանիշ է դառնում: Եթե դուք տեսել եք տաճարներից որևէ մեկը գիշերը, ապա գիտեք, թե որքան տպավորիչ տեսարան է դա: Տիրոջ տունը, լույսի մեջ ողողված, կանգնած մթության մեջ, Հիսուս Քրիստոսի ավետարանի զորությունն ու ոգեշնչումը խորհրդանշող փարոս է, որը հաստատուն կանգնած է աշխարհում, որն էլ ավելի խորն է սուզվում հոգևոր խավարի մեջ:

Տաճարային ծեսը առաջին այցից լիովին չի հասկացվի: Այն կհասկացվի մասամբ: Վերադարձեք կրկին, կրկին ու կրկին: Վերադարձեք սովորելու համար: Այն բաները, որոնք ձեզ մոտ առաջացրել են անհանգստություն կամ շփոթություն, որոնք խորհրդավոր են թվացել, կպարզաբանվեն ձեզ համար: Դրանցից շատերը կլինեն ծածուկ, խիստ անձնական բաներ, որոնք չեք կարողանա իրապես բացատրել որևէ մեկին: Սակայն ձեզ համար դրանք կլինեն ակնհայտ բաներ:

Ինչ որ մենք ի վիճակի ենք ստանալու տաճարից, մեծապես կախված է նրանից, թե մեր խոնարհության, ակնածանքի և սովորելու ձգտումի ինչ քանակություն կվերցնենք մեզ հետ՝ տաճար այցելելիս: Եթե մենք սովորելու պատրաստակամություն ունենանք, ապա տաճարում մենք կուսուցանվենք Հոգու կողմից:

Երբ դուք տաճարի օժտման նիստը հաճախելու կամ կնքմանը վկա լինելու հնարավորություն ունենաք, խորհեք ձեր առաջ ցուցադրվածի խորը իմաստի շուրջ: Ձեր այցելությունից հետո մտապահեք այդ բաները, խաղաղ հոգով և աղոթքով վերհիշեք դրանք, և կնկատեք, թե ինչպես է աճում ձեր գիտելիքը:

Տաճարի փորձառության մեծագույն արժեքներից մեկն այն է, որ այն երկրի նկատմամբ Աստծո ունեցած նպատակների լայնածավալ և համապարփակ մի տեսարան է ներկայացնում: Մեկ անգամ տաճարում լինելուց հետո (և մենք կարող ենք վերադառնալ և թարմացնել մեր հիշողությունները), կյանքի իրադարձությունները կդասավորվեն մի ուրվագծի վրա: Մենք կարող ենք տեսնել մեր հեռանկարը և արագ նկատել, թե երբ ենք շեղվում ուղուց:

Ուրեմն ուղղեք ձեր հայացքը դեպի տաճար: Առաջնորդեք ձեր երեխաներին դեպի տաճար: Մանկության օրերից սկսած ուղղեք նրանց ուշադրությունը դեպի այն և պատրաստեք նրանց այն օրվա համար, երբ նրանք հնարավորություն կունենան մտնելու սուրբ տաճար:

Միևնույն ժամանակ, ինքներդ եղեք ընկալունակ, եղեք ակնածալից: Ջանասիրաբար քաղեք այդ ուսմունքներից՝ խորհրդանշական ու խորապես հոգևոր ուսմունքներից, որոնք մատչելի են միայն տաճարում:

Տաճարային ամուսնությանը պատրաստվելու համար ժամանակ է պահանջվում: Այդ իրադարձությունը արժանի է մանրամասն ծրագրավորման: Հազվադեպ չեն այնպիսի դեպքերը, երբ երիտասարդ զույգերը սիրահարվելով, հակառակ ծնողների խորհուրդներին, որոշում և հայտարարում են անմիջապես՝ մեկ կամ երկու շաբաթվա ընթացքում ամուսնանալու իրենց ցանկության մասին: Պատրաստվելու նպատակով փոքր-ինչ ավել սպասելու ծնողների խնդրանքը երիտասարդների կողմից հաճախ դիտվում է որպես ամուսնության մերժում: Նրանք մտավախություն են ապրում, որ, եթե անմիջապես չամուսնանան, ապա ինչ-որ բան անպայման կխափանի իրենց ծրագրերը: Որոշ երիտասարդ զույգեր անհասունություն և կոպտություն են ցուցաբերում, երբ ծնողներից համառորեն պահանջում են անհապաղ պատրաստություններ կատարել, ինչը կարող է մեծ դժվարություններ առաջ բերել և հանգեցնել նրան, որ այդ փորձառության արդյունքը չլինի այնքան հիշարժան, որքան այն կարող էր լինել այլ հանգամանքներում:

Տաճարի առաջին այցելության կամ տաճարային ամուսնության օրը չափից ավելի շտապողականության ու լարվածության արդյունքը լինում է այն, որ ինչ-որ բան թերի է լինում: Առաջին անգամ տաճարում լինելը կամ ամուսնության կնքման օրը «կյանքում մեկ անգամ» տեղի ունեցող փորձառություններից է: Այն արժանի է պատշաճ նախապատրաստության: Դա այնքան նշանակալի օր է, որ մենք չպետք է թույլ տանք, որ որևէ մանրուք, որևէ չնչին տնային հոգս շեղի մեզ: Դրա համար ամեն ինչ պետք է նախորոք անել: Եթե ինչ որ անհրաժեշտ բան անկատար մնա, ապա դա կարող է մեծ խափանման պատճառ դառնալ:

Եթե հավաքի եք գնում ժամանակից շուտ, լուռ նստում եք եկեղեցում և դիտում եք ժամանող մարդկանց, դուք տեսնում եք, որ նրանցից յուրաքանչյուրը գալով իր հետ ինչ-որ բան է բերում: Հոգևոր մթնոլորտը ջերմանում է և սենյակը փոխվում է, դատարկ

սենյակից վերափոխվելով համայնքի՝ հոգևոր ակնկալիքներով հավաքված եղբայրներով ու քույրերով լի դահլիճի:

Այժմ մեր հոգսաշատ օրերում, մեզ չի հաջողվում միշտ նման ձևով գնալ ժողովների: Ինչ էլ որ ընձեռի մեզ հավաքների հանդեպ այդպիսի մոտեցումը, այն առավել կարևոր է, երբ մենք գնում ենք տաճար: Դա հատկապես ճշմարիտ է, երբ մենք առաջին անգամ ենք գնում այնտեղ: Մենք պետք է տեղ հասնենք ժամանակից շուտ:

Ինչպես հասկանում եք, ժամանակից շուտ ժամանելը միայն ապահովության համար չի արվում, որպեսզի համոզվեք որ երաշխավորագրերն ու անհրաժեշտ ամեն ինչ կարգին է և հարմարվեք նոր փորձառությանը: Դա ավելին է: Դա ճիշտ տեղում ժամանակին լինելն է, որպեսզի հնարավորություն լինի հանդարտորեն լցվել ճշմարիտ հոգով՝ պատրաստվելով այն ամենին, ինչը պետք է տեղի ունենա:

Մինչև այժմ մենք խոսում էինք միայն տաճարի փորձառության անմիջական մասնակիցների մասին, բայց լինում են դեպքեր, երբ տաճարային հարսանիքը ծրագրելիս պարզվում է, որ ընտանիքի շատ մոտ անդամներից մի քանիսը չեն համապատասխանում տաճարի երաշխավորագիր ստանալու պահանջներին: Հնարավոր է, որ փեսացուն կամ հարսնացուն նորադարձ է, նրա ծնողները դեռևս Եկեղեցու անդամներ չեն կամ նրանց անդամության ժամանակը չի բավականացնում, որպեսզի նրանք տաճարի երաշխավորագիր ստանան: Հնարավոր է, որ չնայած նրան, որ ծնողները անդամ են, նրանցից մեկի ապրելակերպը այնուամենայնիվ լիովին չհամապատասխանի ավետարանի չափանիշներին, որոնք անհրաժեշտ են տաճարի երաշխավորագիր ստանալու համար: Այդ սահմանափակումները հատկապես մեծ դժվարություններ են առաջացնում տաճարային ամուսնությունների դեպքում: Որովհետև դա հենց այն պահն է, երբ ընտանիքի անդամները պետք է իրար շատ մոտ լինեն,և միությամբ համախմբվեն, որպեսզի միմյանց հետ կիսեն կյանքի այդ սուրբ րոպեները: Երաշխավորագիր ստանալու մերժումը մեկին, որը չի բավարարում համապատասխան պահանջներին կամ Եկեղեցուն չպատկանող ընկերոջը կամ ազգականին կնքման արարողություանը հրավիրելու անկարողությունը անմիջապես կարող են խնդիրներ առաջացնել: Դա կարող է տխրության և վիճաբանությունների պատճառ դառնալ հենց այն պահին, երբ առավել մեծ խաղաղություն և ներդաշնակություն է պահանջվում:

Ի՞նչ կարելի է անել նման դեպքերում: Այն, ինչը ոչ մի դեպքում չի կարելի անել, դա եպիսկոպոսի վրա ճնշում գործադրելն է: Համաձայն չափանիշների, որոնք եպիսկոպոսը՝ որպես Իսրայելի ընդհանուր դատավոր, պարտավոր է հետևել, նա չի կարող բարի կամքով երաշխավորագիր տալ մեկին, որը արժանի չէ դրան: Այդպես

վարվելով, նա մեծ վնաս պատճառած կլինի ներգրավված անձանց: Բացի այդ, դա նաև անազնվություն կլիներ եպիսկոպոսի հանդեպ:

Երբ տաճարային ամուսնությանը պատրաստվելիս պարզվում է, որ ծնողներից կամ ազգականներից ինչ-որ մեկը չի կարող մտնել տաճար, ապա իմաստալից ծրագրավորումը այդ դժվարությունը կարող է վերածել հնարավորության: Մտածեք հետևյալ առաջարկի մասին: Հրավիրեք ոչ անդամ ծնողին կամ այն ազգականին, որը երաշխավորագիր ստանալու հնարավորություն չունի միանալու տաճար գնացող հարսանքավորներին: Տաճարի շրջակա տարածքում տիրում է յուրահատուկ ոգի և մթնոլորտ, ինչպիսին չկա ուրիշ ոչ մի տեղ: Որոշ տաճարներում կան այցելուների կենտրոններ: Տաճարների տարածքները միշտ գեղեցիկ բարեկարգված են: Ամեն դեպքում դա խաղաղության և անդորրության վայր է:

Կազմակերպեք այնպես, որպեսզի ինչ-որ մեկը ուղեկցի դրսում սպասող ընտանիքի անդամին: Իհարկե, սպասող անձնավորությանը չպետք է մենակ թողնել: Եղել են դեպքեր, երբ ընտանիքի անդամները, որոնք լիովին արժանի են եղել տաճար մտնելուն և հարսանեաց արարողություններին մասնակցելուն, գոհացել են նրանով, որ մնացել են դրսում, այն մարդկանց հետ, որոնք հնարավորություն չեն ունեցել ներս մտնել: Այստեղ, տաճարի շրջակայքում զբոսնելիս, նրանք հնարավորություն են ունեցել բացատրելու հյուրերին, թե ինչո՞ւ են երիտասարդները որոշել ամուսնությունը կնքել տաճարում:

Այդ ընթացքում կարելի է ունենալ այնպիսի հրաշալի զգացումներ, որոնք հնարավոր չէ ստանալ որևէ այլ հանգամանքներում: Օրինակ, մեծ տաճարներից մի քանիսում անց են կացվում էքսկուրսիաներ: Եվ, եթե ամեն ինչ նախապես ծրագրվի, ապա հնարավոր կլինի յուրահատուկ ուշադրություն ցուցաբերել ընտանիքի այն անդամի նկատմամբ, որը այս կամ այն պատճառով չի կարող մտնել տաճար: Այդպիսով կարելի է մեղմացնել Եկեղեցու անդամ կամ ոչ անդամ ծնողի հիասթափության, անգամ վիրավորանքի, երբեմն նաև թախծի զգացումը, երբ նա զրկվել է տաճար մտնելու հնարավորությունից:

Որոշ տաճարներում կա հատուկ սենյակ, որտեղ տաճար մտնելու հնարավորություն չունեցող ծնողները կարող են հանդիպել իրազեկ մի անձնավորության հետ, որը կպատասխանի նրանց հարցերին:

Երիտասարդ զույգը պետք է գիտակցի, որ իրենց ծնողները, հավանաբար, փեսացուի կամ հարսնացուի ամբողջ կյանքի ընթացքում սպասել են նրանց հարսանյաց հանդեսի օրվան: Արարողությանը մասնակցելու նրանց ցանկությունը, ինչպես նաև այդ հնարավորությունից զրկվելու վիրավորանքը, ծնողական կապվածության նշան է:

Цэнхэмийн Оюунцэцэг, Онцгой Цэцэгт Зочлох Өрөө

Երիտասարդ զույգը չպետք է վիրավորվի իր հերթին: Այդ բոլորը պետք է ընդունվի փոխըմբռնումով և մանրամասնորեն ծրագրված լինի որպես հարսանիքի բաղկացուցիչ մաս:

Իհարկե, կան դեպքեր, երբ տաճար չթույլատրված ծնողի վիրավորանքը հնարավոր չի լինում մեղմել: Նման դեպքերում երիտասարդ զույգը պետք է անի հնարավոր ամեն ինչ, հարթելու իրավիճակը: Կարող է հարց առաջանալ: Արդյոք լավ չէ՞ր լինի, եթե մենք կատարեինք քաղաքացիական ամուսնություն, որպեսզի ծնողները հնարավորություն ունենային մասնակցելու արարողությանը, այնուհետև, սպասելով պահանջվող մեկ տարին, ամուսնությունը կնքել տաճարում: Սակայն դա չի լինի ամենալավ որոշումը: Աղոթքով կատարված մանրամասն ծրագրումը կվերացնի բոլոր դժվարությունները և այդ փորձությունը կվերածվի մի հնարավորության, որը կդարձնի ընտանիքը ավելի միասնական, քան նախկինում էր:

Պսակադրությանը մասնակցելու համար պետք չէ հրավիրել շատ ընկերներ, ծխի անդամներ և ծանոթներ: Հարսանեկան խմբերը պետք է լինեն փոքր և ընդգրկեն միայն զույգերի ընտանիքների անդամներին և հարազատներին: Երբեմն գալիք պսակադրության մասին հայտարարվում է ծխի ժողովի ժամանակ, որ բոլորն իրենց մասնակցությամբ փորձեն աջակցել և քաջալերել ամուսնացող զույգին: Ահա դրա համար է, որ կազմակերպվում է ընդունելություն պսակադրությունից հետո: Հարսանյաց ընդունելությունը լավ ժամանակ է ընկերների և բարեկամների շնորհավորանքների համար: Տաճարային ամուսնությունն ինքնին սուրբ արարողություն է, որին պետք է մասնակցեն նրանք, ովքեր հատուկ տեղ են գրավում ամուսնացողների կյանքում:

Ամուսնության կնքման արարողության խոսքերը մենք չենք քննարկում տաճարից դուրս, սակայն մենք կարող ենք նկարագրել կնքման սենյակը, որպես հրաշալի կահավորված սենյակ, խաղաղ և հանդարտ ոգով և սրբագործված այնտեղ կատարվող սուրբ աշխատանքով:

Նախքան ամուսնական զույգի զոհասեղանին մոտենալը, կնքման արարողությունից առաջ, լիազորված ծառայողը պատիվ ունի տալու, իսկ երիտասարդ զույգը՝ ընդունելու որոշ խորհուրդներ: Ահա որոշ մտքեր, որոնք երիտասարդ զույգը կարող է լսել այդ կապակցությամբ:

«Այսօր ձեր պսակադրության օրն է: Այդ կապակցությամբ դուք լցված եք զգացումներով: Տաճարները կառուցվել են որպես սրբավայր այսպիսի արարողությունների համար: Մենք աշխարհում չենք: Աշխարհիկ ոչ մի բան չի կիրառվում այստեղ և ազդեցություն չպետք է ունենա այն ամենի վրա, ինչ որ մենք կատարում ենք այստեղ:

Մտնելով Տիրոջ տաճարը, մենք դուրս ենք գալիս աշխարհից: Սա ձեր կյանքի ամենանշանակալից օրն է:

Դուք ծնվել և աշխարհ եք հրավիրվել ծնողների կողմից, որոնք ձեր հոգու բնակության համար մահկանացու տաղավար են պատրաստել: Ձեզանից յուրաքանչյուրը մկրտվել է: Մկրտությունը, այդ սուրբ արարողությունը մաքրագործվելու, մահվան և հարության, դեպի նորոգված կյանք գալու խորհրդանիշն է: Այն ընդգրկում է ապաշխարությունը և մեղքերի թողությունը: Հաղորդությունը մկրտության ուխտի վերանորոգումն է, որի միջոցով, եթե ապրում ենք արժանի ձևով, կարող ենք պահպանել մեր մեղքերի թողությունը:

Դուք՝ փեսացու, ձեռնադրվել եք քահանայության: Դուք սկզբում ձեռնադրվել եք Ահարոնյան Քահանայության, և աճելով, հավանաբար, առաջադիմել եք այդ քահանայության բոլոր պաշտոններում՝ սարկավագ, ուսուցիչ և քահանա: Ապա եկել է օրը, երբ դուք արժանի եք համարվել ընդունելու Մելքիսեդեկյան Քահանայությունը: Այդ քահանայությունը, որը համարվում է բարձրագույն քահանայություն, կոչվում է քահանայություն ըստ Աստծո սրբագույն կարգի կամ Սուրբ Քահանայություն ըստ Աստծո Որդու Կարգի (տե°ս Ալմա 13.18 և Հելաման 8.18): Ձեզ տրվել է քահանայության պաշտոն: Այժմ դուք երեց եք:

Ձեզանից յուրաքանչյուրը ստացել է իր օժտումը: Այդ օժտման ժամանակ դուք ստացել եք հավերժական ներուժ: Բայց այս բոլոր բաները՝ հավասարաչափ կարևոր լինելով, եղել են նախապատրաստական արարողություններ, զոհարանի առաջ գալու համար, որտեղ դուք կկնքվեք որպես ամուսին և կին, ժամանակի և հավերժության համար: Դուք այժմ դառնում եք ընտանիք, ունենալով կյանք ստեղծելու ազատություն, հավատարմության և զոհաբերության միջոցով երեխաներ աշխարհ բերելու, նրանց մեծացնելու և աջակցելու նրանց իրենց մահկանացու կյանքի միջով ապահով անցնելու և մի օր տեսնելու նրանց եկած տաճար, ինչպես դուք եք եկել, այս տաճարային սուրբ արարողություններին մասնակցելու համար:

Դուք եկել եք հոժարակամ և արժանավոր եք գտնվել: Այս միությունը կարող է կնքվել Խոստումի Սուրբ Հոգով:

> «Ուստի, այժմ ես ուղարկում եմ ձեզ մեկ ուրիշ Մխիթարիչ, այսինքն ձեզ՝ իմ բարեկամներին, որ այն կարողանա մնալ ձեր սրտերում, այսինքն՝ խոստումի Սուրբ Հոգին. մեկ ուրիշ Մխիթարիչ, որը նույնն է, ինչ ես խոստացա իմ աշակերտներին, ինչպես արձանագրված է Հովհաննեսի վկայության մեջ:
>
> Այդ Մխիթարիչը խոստումն է, որը ես տալիս եմ ձեզ, որը հավերժական կյանք է, այսինքն՝ սելեստիալ արքայության փառքը» (Վ և ՈՒ 88:3-4):



Տեսարան Եդեմական Պարտեզի Մենյակից, Լոս Անջելեսի Տաճար

Միմյանց ամուսնության ուխտի մեջ ընդունելը մեծ պատասխանատվություն է, որն իր հետ բերում է անսահման օրհնություններ:

Շատ հավանական է, որ փեսացուն և հարսնացուն այնքան տարված լինեն իրենց հարսանիքով, որ ուշադիր չլսեն, երբեմն նրանք կարող են բոլորովին չլսել կնքման արարողության խոսքերը: Թեև այդ խոսքերը մենք չենք կարող կրկնել տաճարից դուրս, այնուամենայնիվ, մենք առիթ ենք ունենում ժամանակ առ ժամանակ վերադառնալու տաճար և ամուսնության վկա լինելու: Մեծահոգի Տերը մեզ տալիս է այդպիսի հնարավորություն: Այդ պահերին, երբ անձամբ ներգրավված չենք, մենք կարող ենք ուշադիր լսել արարողության խոսքերը: Նմանապես, հաճախակի վերադառնալով մահացածների համար արարողություններ կատարելուն, մենք կարող ենք թարմացնել մեր միտքը և հոգին ևս մեկ օժտման փորձառությամբ:

Եթե նախկինում դուք ամուսնացել եք քաղաքացիական ծիսակատարությամբ, ապա այժմ կարող է ցանկություն ունենաք կնքվել հավերժության համար, և, եթե երեխաներ ունենաք, կնքվել նրանց հետ որպես հավերժական ընտանիք: Եթե արժանի լինեք դրան, ապա դա ձեզ համար այս օրհնությունը ստանալու մեծ արտոնություն կլինի:

Սպիտակ հագնվածները

Տաճարային արարողությունների աշխատանք կատարելիս մենք կրում ենք սպիտակ հագուստներ: Այդ հագուստը անմեղության, արժանավորության և մաքրության խորհրդանիշ է:

Տաճար մտնելիս մենք փոխում ենք մեր առօրյա հագուստը տաճարային սպիտակ հագուստով: Այդ զգեստափոխությունը տեղի է ունենում հանդերձարանում, որտեղ յուրաքանչյուր անձի տրամադրվում է պահարան՝ առանձին հանդերձատեղ: Տաճարում ջանասիրաբար պահպանվում է համեստության կատարելատիպը: Թողնելով ձեր հագուստները պահարանում, դուք այնտեղ եք թողնում նաև ձեր հոգսերը, մտահոգությունները և այն ամենը, ինչ որ կարող է շեղել ձեր միտքը: Դուրս գալով ձեր փոքրիկ հանդերձարանից սպիտակ հագնված, դուք ապրում եք միասնության և հավասարության զգացում, քանի որ ձեր շուրջը բոլորը նույն ձևով են հագնված:

Եթե առաջին անգամ եք գնում տաճար, խորհրդակցեք ձեր եպիսկոպոսի հետ: Ձեզ համար երաշխավորագիր պատրաստելիս նա ձեզ որոշ չափով կբացատրի տաճարում պահանջվող հագուստի էությունը: Այդպիսի հագուստ ձեռք բերելու հարցը չպետք է անհանգստություն պատճառի ձեզ: Դուք այն կարող եք գնել Եկեղեցու

Բաշխման Ծառայությունների միջոցով, իսկ, որոշ դեպքերում, վարձել այն տաճարում: Երկրորդ դեպքում ձեզանից կպահանջվի շատ համեստ վարձավճար, որը նախատեսված է միայն հագուստի լվացման ծախսերը հոգալու համար: Նման հագուստը մատչելի չէ փոքր տաճարներում:

Ինչպես տաճարային ծեսերի և արարողությունների, այնպես էլ տաճարում կրող հագուստի վերաբերյալ տաճարից դուրս մենք շատ սահմանափակ բաներ ենք քննարկում: Մենք կարող ենք ասել, որ ինչպեսև արարողությունները, այն խորհրդանշական մեծ իմաստ ունի:

Այդպիսի հագուստով և հանդերձանքով տաճար մտնելը Եկեղեցու անդամի կողմից հարգանքի և ակնածանքի նշան է, ինչպես նաև հնարավորություն է տալիս անդամին անհարմար չզգալ Տիրոջ ներկայության մեջ: Մի պահ պատկերացրեք, որ դուք մի հայտնի և մեծապես հարգված ղեկավարի տուն եք հրավիրված: Ձեզ տեղեկացնում են, որ դուք հայտնվելու եք հարգարժան հյուրերի շրջապատում, որոնք նմանատիպ հրավերներ են ստացել: Հրավերը վկայում է այն մասին, որ տանտերը ձեր մասին բարձր կարծիքի է: Դուք գիտակցում եք, որ շատերը շոյված կլինեին այդպիսի հրավեր ստանալու դեպքում, բայց այս կամ այն պատճառով չեն ստացել և բնականաբար չեն կարող ներկա լինել: Այդպիսի պայմանների դեպքում կասկածում եմ, որ դուք այդ տուն կներկայանայիք աշխատանքային մաշված շորերով կամ հանգստի հանդերձանքով: Չեմ կարծում, որ որևէ տղամարդ կգնար այնտեղ առանց սափրվելու կամ որևէ կին՝ առանց մազերը հարդարելու:

Ազնվաբարո և նրբաճաշակ մարդիք այդպիսի կարևոր հավաքույթների հրավեր ստանալիս, հաճախ, իրենց հարց են տալիս, թե որ զգեստը կհամապատասխաներ այդպիսի դեպքի համար: Արդյո՞ք դուք հանգամանորեն չէիք պատրաստվի այդ հատուկ իրադարձությանը: Հնարավոր է նույնիսկ, որ դուք նոր զգեստ գնեիք, հուսալով, որ ձեր արտաքինով չեք խախտի այդ հարգալից մթնոլորտի ներդաշնակությունը:

Հավանաբար դուք կհոգայիք նաև ձեր հագուստի մաքրության և հարդարանքի համար: Առանց վայելուչ տեսքի դուք ձեզ անհարմար կզգայիք:

Տաճար այցելելու հնարավորությունը կարելի է համեմատել այդպիսի մի հնարավորության հետ:

Միայն մեկ դեպքում Եկեղեցու անդամները կարող են հրավիրվել մտնելու տաճար աշխարհիկ հագուստով: Դա տաճարային ամուսնությանը վկա լինելու դեպքում է: Այդ ժամանակ միայն կոշիկներն

են հանվում և փոխվում են սպիտակ մաշիկներով: Տարիներ առաջ Եղբայրները տվել են այդ իրավունքը ընտանիքի այն անդամների և ընկերների հարմարության համար, որոնք չեն մասնակցում ամուսնության արարողությունից անմիջապես առաջ տեղի ունեցող օժտման նիստին:

Փեսացուն և հարսնացուն մտնում են տաճար՝ ամուսնանալու ժամանակի և հավերժության համար: Այնտեղ հարսնացուները կրում են սպիտակ երկարաթև զգեստներ, որոնք համեստ են իրենց ոճով և գործվածքով, զերծ որևէ պատկերազարդումից: Փեսացուները նույնպես սպիտակ հագուստ են հագնում: Տաճարային ամուսնություններն ներկա լինող եղբայրները սմոքինգ չեն կրում:

Երբեմն մենք տարակուսում և տխրում ենք, երբ տաճարում տեսնում ենք մեկին, որը ամուսնության արարողության վկա լինելու կամ տաճարային ինչ-որ նիստի մասնակցելու է եկել այնպիսի հագուստով, որով կգնար զբոսանքի կամ սպորտային միջոցառման:

Տաճար մտնելու մեր արտոնությունը մեզանից ավելի արժանավայել վերաբերմունք է պահանջում: Տիրոջը հաճելի է, երբ մենք մաքուր ենք մարմնով և կրում ենք մաքուր հագուստ, անկախ նրանից, թե ինչ արժեք ունի այդ զգեստը: Մենք պետք է այնպիսի հագուստ կրենք, որը հարմարավետ կլինի հաղորդության ժողովի կամ արժանապատիվ և հարգելի որևէ այլ հավաքի ժամանակ:

Եղել են դեպքեր, երբ ամուսնությանը վկա լինելու ներկաներից մեկը ակնհայտորեն շատ քիչ ուշադրություն է դարձրել Եղբայրների կողմից հանդերձանքի և հարդարանքի վերաբերյալ տրված խորհրդին, որում հորդորվում է չընդօրինակել աշխարհիկ հագնվելու չափազանց անհամեստ ոճը, մազերի երկարությունը, անհամեստ ձևավորումը և այլն: Հետաքրքիր է, թե ինչու մի մարդ, որը բավականաչափ հասուն է տաճար մտնելու թույլտվություն ստանալու համար, միևնույն ժամանակ չի կարող բավականաչափ զգայուն լինել ըմբռնելու, որ Տիրոջը հաճելի չեն նրանք, ովքեր աշխարհի ճանապարհներին հետևելու բացահայտ նախընտրանք են ցուցաբերում:

Ինչպե՞ս կարող է երաշխավորված Եկեղեցու անդամը տաճար այցելել անհամեստ և աշխարհիկ պերճանք կրող հագուստով: Ինչպե՞ս կարող է նա արժանապատվության և նրբաճաշակության չափանիշներին հակասող հարդարանք կրել:

Երբ դուք հնարավորություն եք ստանում գնալու տաճար և մասնակցելու տաճարային արարողություններին կամ վկա լինելու կնքման արարողությանը, հիշեք, թե որտեղ եք: Դուք հյուր եք Տիրոջ տանը: Եվ դրա համար պետք է հագնվեք և հարդարվեք այնպես, որ անհարմար չզգաք, երբ Տանտերը հայտնվի:

Նրանք, ովքեր կրում և տարածում են քահանայության օրհնությունները, պետք է իրենց մարմինները ծածկեն այնպես, ինչպես հայտնվել է Մարգարե Ջոզեֆ Սմիթին, երբ նրան տրվել է օժտման ծեսը:

Եկեղեցու անդամները իրենց տաճարային արարողություններն ընդունելուց հետո, մշտապես կրում են հատուկ հանդերձանք կամ ներքնազգեստ: Ներքնազգեստները բաշխվում են Եկեղեցու կազմակերպության կողմից և, սովորաբար, Եկեղեցու բաշխման ծրագրի միջոցով մատչելի են աշխարհով սփռված անդամների համար:

Ներքնազգեստը ներկայացնում է սուրբ ուխտերը: Այն համեստության գրավական է և կրողի համար ծառայում է որպես վահան և պաշտպանություն:

Այդպիսի ներքնազգեստը անդամներին չի խանգարում կրել աշխարհի տարբեր երկրներում ընդունված ժամանակակից հագուստ: Միայն անհամեստ և ծայրահեղ ոճի հագուստը անհամատեղելի կլինի այդ ներքնազգեստի հետ: Եկեղեցու յուրաքանչյուր անդամ, անկախ նրանից, եղել է տաճարում, թե ոչ, եթե գտնվում է ճշմարիտ հոգու ազդեցության տակ, կձգտի խուսափել չափազանց արտահայտիչ և անհամեստ հագուստ կրելուց:

Հնարավոր են դեպքեր, երբ Եկեղեցու օժտված անդամները կհարցադրվեն իրենց ներքնազգեստի վերաբերյալ:

Մի առիթով Եղբայրներից մեկը հրավիրվել էր ելույթի Ռոուդ Այլնդում՝ Նյուպորտի Ծովային Նավատորմի Քահանաների պատրաստման դպրոցում: Դահլիճում հավաքվել էին նավատորմի բազմաթիվ բարձրաստիճան քահանաներ՝ Կաթոլիկներ, Բողոքականներ և Հրեաներ:

Երբ եկավ հարց ու պատասխանի ժամանակը, քահանաներից մեկը հարց տվեց. «Կարո՞ղ եք մեզ ինչ-որ բան ասել այն ներքնահագուստի մասին, որը կրում են որոշ Մորմոն զինծառայողներ»: Հարցի էությունն էր. «Ինչո՞ւ եք դուք անում դա: Արդյո՞ք դա տարօրինակ չէ՞: Արդյո՞ք դա դժվարություն չի առաջացնում ձեզ համար»:

Որպես պատասխան ելույթ ունեցող եղբայրը դիմեց քահանային հարցով. «Ո՞ր եկեղեցին եք դուք ներկայացնում»: Քահանան անվանեց բողոքական եկեղեցիներից մեկը:

Եղբայրն ասաց. «Առօրյա կյանքում, ինչպես նաև զինծառայության ժամանակ ժողովներ վարելիս դուք հոգևորականի հագուստ եք կրում, այդպես չէ՞»: Քահանան համաձայնվեց:

Եղբայրը շարունակեց. «Ես կարծում եմ, որ դա ինչ-որ կարևորություն է ներկայացնում ձեզ համար, այն իմաստով, որ դա առանձնացնում է ձեզ մնացածից: Դա, կարելի է ասել, ձեր համազգեստն է:



Թերեստրիալ Սենյակ, Սոլթ Լեյքի Տաճար

Կարծում եմ նաև, որ այն շատ ավելի մեծ նշանակություն ունի ձեզ համար: Հավանաբար այն հիշեցնում է ձեզ ձեր ով լինելու և ձեր ուխտերի ու պարտականությունների մասին: Այն ձեզ անընդհատ հիշեցնում է, որ դուք հոգևորականության ներկայացուցիչ եք, որ դուք ձեզ Տիրոջ ծառա եք համարում և պարտավոր եք ապրելու այնպես, որ արժանի լինեք ձեր պաշտոնին»:

Ապա նա ավելացրեց. «Դուք պետք է ի վիճակի լինեք հասկանալու պատճառներից առնավազն մեկը, թե ինչու Վերջին Օրերի Սրբերը խորը հոգևոր պարտավորություն ունեն կապված ձեր նշած ներքնազգեստի հետ: Մեր եկեղեցիների միջև եղած հիմնական տարբերություններից մեկն այն է, որ մենք, ի տարբերություն ձեզ, չունենք վարձատրվող հոգևորականություն: Համայնքը ամբողջովին կառավարվում է տեղական ղեկավարների կողմից: Նրանք բոլորը տարբեր մասնագիտությունների տեր մարդիկ են: Այնուամենայնիվ, նրանց քահանայություն է շնորհված: Նրանք քահանայության որոշակի պաշտոն են կրում: Նրանք ձեռնադրված են նախագահող կոչումների, ինչպես՝ նախագահներ, խորհրդականներ և տարբեր կարգի ղեկավարներ: Կանայք նույնպես նրանց հետ կիսում են այդ պարտականությունները և պատասխանատվությունները: Տղամարդը, որ Կիրակի օրը ղեկավարում է համայնքը, որպես եպիսկոպոս, երկուշաբթի օրը կարող է գնալ իր աշխատանքին, որպես փոստի գործավար, գրասենյակային ծառայող, գյուղատնտես, բժիշկ: Նա կարող է լինել ռազմաօդային ուժերի օդաչու կամ ռազմածովային նավատորմի սպա: Մեր չափանիշների համաձայն, նա նույնպիսի ձեռնադրված ծառայող է, ինչպիսին դուք եք՝ ձեր չափանիշների համաձայն: Որպես այդպիսին նա ընդունված է շատ երկրների կառավարությունների կողմից: Իսկ այդ հագուստից մենք ստանում ենք նույնքան օգուտ, որքան դուք՝ հոգևորականի ձեր հանդերձանքը կրելուց: Տարբերությունը միայն նրանում է, որ մենք այդ հագուստը կրում ենք առօրյա հագուստի տակից, ոչ թե վրայից, քանի որ մենք, ի լրացումն Եկեղեցական ծառայության, տարբեր ոլորտների աշխատողներ ենք: Այդ սուրբ բաները մենք չենք ցանկանում ցուցադրել աշխարհի առաջ»:

Այնուհետև նա բացատրեց, որ կան նաև ուրիշ, ավելի խորը հոգևոր իմաստներ, որոնք կապված են այդ հագուստի և տաճարներում կնքվող ուխտերի հետ: Բայց մենք նպատակահարմար չենք գտնում դրանց քննարկումը, ոչ թե այն պատճառով, որ դրանք գաղտնիք են, կրկնեց նա, այլ որովհետև սուրբ են:

Մարմինը ծածկելով ներքնազգեստը հանդիսանում է այդ ուխտերի տեսանելի և շոշափելի հուշարարը: Եկեղեցու բազմաթիվ անդամների համար ներքնազգեստը պաշտպանության արգելապատ

է հանդիսացել, երբ նրանք գայթակղության առաջ են կանգնել: Բացի այդ, այն խորհրդանշում է մեր խորը հարգանքը դեպի Աստծո օրենքները, մասնավորապես՝ բարոյականության չափանիշը:

Կնքելու զորությունը

Որպեսզի մենք հասկանանք տաճարային աշխատանքի պատմությունն ու ուսմունքը, մենք պետք է հասկանանք, թե ինչ է իրենից ներկայացնում կնքելու զորությունը: Որոշ չափով, ենք պետք է պատկերացնենք, թե ինչու են այդքան կարևոր կնքելու զորությունը գործածելու իշխանության բանալիները:

Քրիստոսից առաջ մոտ ինը հարյուր տարի առաջ մարգարե Եղիան հայտնվեց Իսրայելի թագավորի պալատում: Նա կրում էր սրբազան իշխանություն՝ կնքելու զորություն:

Եղիան կատարեց իր ծառայությունը, կարգեց և օծեց Եղիսեին որպես իր հետնորդ, և այնուհետև, ինչը շատ կարևոր է, նա չմահացավ: Ինչպես Մովսեսը նա փոխակերպվեց:

Դրանից հետո նրա անունը միայն մեկ անգամ հիշատակվում է Հին Կտակարանի վերջին գլխի վերջին հատվածի վերջին տողերում: Այստեղ Մաղաքիան մարգարեանում է, որ Եղիան կվերադառնա և «պիտի դարձնէ հայրերի սիրտը դեպի որդիքը և որդկանց սիրտը՝ դեպի իրանց հայրերը», այլապես ողջերկիրըկզարկվի անեծքով: (Տե՛ս Մաղաքիա Դ.5-6:)

> Երբ Հիսուսը դուրս գնաց Փիլիպեայ Կեսարիայի կողմերը, և իր աշակերտներին հարցնում էր և ասում. Մարդիկ ինձ համար ո՞վ են ասում, որ մարդի Որդին լինի:
>
> Նորանք էլ ասեցին. Ոմանք՝ թէ Յովհաննես Մկրտիչն է. իսկ միւսները՝ Եղիան. ուրիշներն էլ՝ Երեմիան, կամ մարգարէների մեկը:
>
> Նորանց ասեց. Իսկ դուք ո՞վ եք ասում ինձ համար, թէ լինիմ:
>
> Սիմօն Պետրոսը պատասխան տուաւ և ասեց. Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստուծոյ Որդին:
>
> Եվ Հիսուսը պատասխան տուաւ և ասեց նորան. Երանի քեզ, Սիմօն՝ Յովնանի որդի, որովհետև մարմինը և արիւնը չ՛յայտնեց քեզ, բայց իմ Հայրը որ երկնքումն է:
>
> Ես էլ ասում եմ քեզ, որ դու ես Պետրոս, և այդ վեմի վերայ կ՛շինեմ իմ եկեղեցին, և դժոխքի դռները չեն յաղթիլ նորան:

Սելեստիալ Սենյակ, Պրովոյի Տաճար

Եվ ես կ՛տամ քեզ երկնքի արքայության բանալիները, և այն որ կապես երկրի վերայ, կապուած կ՛լինի երկնքումը. և այն որ երկրի վերայ արձակես, արձակուած կ՛լինի երկնքումը (Մատթէոս ԺԶ.13-19):

Երբ Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը Տիրոջ հետ գնացին Փոխակերպման Լեռը, նրանց հայտնվեցին Տիրոջ կողմից փոխակերպված երկու էակ: Նրանք ճանաչեցին այդ էակներին, որոնք էին՝ Մովսեսը և Եղիան, որ եկել էին նախագահությանը հանձնելու կնքման զորությունը: (Տե՛ս Մատթէոս ԺԷ.1-8; նշում. *Եղիան* անունը *Elijah* եբրայերեն բառի հունարեն թարգմանությունն է, այն հաճախ օգտագործվում է Նոր Կտակարանում Հին Կտակարանի մարգարե Եղիայի համար:)

Պետրոսը պետք է կրեր բանալիները: Պետրոսը պետք է կրեր կնքելու զորությունը, այն իշխանությունը, որն իր մեջ կրում է երկրի վրա կապելու կամ կնքելու կամ երկրի վրա արձակելու զորություն, և այդ ամենը կլինեի նաև երկնքում:

Մեր թվարկության 34-րդ տարում Իր խաչումից հետո Տերը ծառայեց Նեփիացիներին: Նա նրանց թելադրեց (և դա մի նշանավոր իրադարձություն է սուրբ գրությունների պատմության մեջ) Մաղաքիայի վերջին երկու գլուխները (որոնք պարունակում էին մարգարեություն այն մասին, որ Եղիան պետք է վերադառնա), պատվիրեց գրի առնել դրանք և այնուհետև մեկնաբանեց դրանք:

Երբ Մորոնի հրեշտակը հայտնվեց Մարգարե Ջոզեֆ Սմիթին, որպեսզի նրան պատմի թիթեղների մասին, նա մեջբերեց Մաղաքիայի մարգարեությունից այն մասին, որ Եղիան պետք է վերադառնա: Այս մեջբերումը այժմ Վարդապետություն և Ուխտերի երկրորդ բաժինն է:

Մորոնիի հայտնվելուց տասներեք տարի անց կառուցվեց տաճար համապատասխան նպատակի համար, և Տերը կրկին հայտնվեց և Եղիան եկավ Նրա հետ և շնորհեց կնքելու զորության բանալիները:

Այդ բանալիները պատկանում են Եկեղեցու Նախագահին՝ մարգարեին, տեսանողին և հայտնողին: Կնքելու այդ սրբազան զորությունն այժմ Եկեղեցում է: Ոչինչ չի ընդունվում առավել սուրբ դողդոջյունով նրանց կողմից, ովքեր գիտեն այդ իշխանության կարևորությունը: Ոչ մի բան չի պահպանվում առավել խնամքով: Յուրաքանչյուր տվյալ ժամանակահատվածում երկրի վրա կան սահմանափակ թվով մարդիք, որոնք կրում են կնքելու այդ զորությունը, յուրաքանչյուր տաճարում կան եղբայրներ, որոնց տրված է կնքելու զորությունը: Ոչ ոք չի կարող ձեռք բերել այն, եթե դա նրան չտրվի մարգարեի, տեսանողի և հայտնողի՝ Հիսուս Քրիստոսի

Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահի կամ նրանց կողմից, ում տրվել է ուրիշներին այն փոխանցելու իրավունքը:

Մենք տեսանք Տիրոջը

Եղիայի վերադարձի օրը 1836 թվականի ապրիլի 3 - ի Կիրակի օրն էր, կեսօրից հետո: Կիրթլենդի տաճարում հաղորդության ժողով էր անցկացվում: Այդ օրը Մարգարեն նկարագրում է հետևյալ պարզ խոսքերով.

«Կեսօրին ես օգնեցի մյուս Նախագահներին Տիրոջ Ընթրիքը Եկեղեցուն բաժանելիս, այն ստանալով Տասներկուսից, որոնց արտոնությունն էր այդ օրը պաշտոնավարել սրբազան սեղանի մոտ: Մատուցելով այս ծառայությունն իմ եղբայրներին, ես վերադարձա բեմ, իջեցված վարագույրների ետևը, և խոնարհվեցի, Օլիվեր Քաուդերի հետ, հանդիսավոր և ցածրաձայն աղոթքի մեջ: Աղոթքից վեր ելնելուց հետո, հետևյալ տեսիլքը բացվեց մեզ երկուսիս» (Վ և Ու 110, նախաբան:)

Վարագույրը հեռացվեց մեր մտքերից, և մեր հասկացողության աչքերը բացվեցին:

Մենք տեսանք Տիրոջը, ամբիոնի բազրիքի վրա կանգնած, մեր առջև. և նրա ոտքերի տակ մաքուր ոսկուց պատրաստված սաթեգույն պատվանդան էր:

Նրա աչքերը կարծես կրակի բոցեր լինեին. նրա գլխի մազերը ճերմակ էին, ինչպես մաքուր ձյունը. նրա դեմքը փայլում էր, արևի պայծառությունից վառ. և նրա ձայնը կարծես շառաչյուն մեծ ջրերի հնչյուն լիներ, այսինքն՝ Եհովայի ձայնը, ասելով.

Ես եմ առաջինը և վերջինը. ես նա եմ, ով ապրում է, ես նա եմ, ով սպանվել էր. ես ձեր բարեխոսն եմ Հոր մոտ:

Ահա, ձեր մեղքերը ներված են ձեզ. դուք մաքուր եք իմ առաջ. հետևաբար, բարձրացրեք ձեր գլուխները և ցնծացեք:

Թող ձեր եղբայրների սրտերը ցնծան, և թող բոլոր իմ ժողովրդի սրտերը ցնծան, ովքեր իրենց զորությամբ կառուցել են այս տունն իմ անվան համար:

Քանզի ահա, ես ընդունել եմ այս տունը, և իմ անունը պիտի լինի այստեղ. և ես ողորմածությամբ կհայտնվեմ իմ ժողովրդին այս տանը:

Այո, ես կհայտնվեմ իմ ծառաներին, և կխոսեմ նրանց հետ իմ իսկ ձայնով, եթե իմ ժողովուրդը պահի իմ պատվիրանները, և չպղծի այս սուրբ տունը

Այո, հազարավորների և բյուրավորների սրտերը մեծապես կցնծան այն օրհնությունների հետևանքով, որոնք պիտի թափվեն, և օժտման հետևանքով, որով իմ ծառաները օժտվել են այս տանը:

Եվ այս տան համբավը պիտի տարածվի օտար երկրներում. և սա է սկիզբն այն օրհնության, որը պիտի թափվի իմ ժողովրդի գլխին: Ճիշտ այդպես: Ամեն:

Այս տեսիլքը փակվելուց հետո, երկինքները կրկին բացվեցին մեզ համար. և Մովսեսը հայտնվեց մեր առջև, և հանձնեց մեզ աշխարհի չորս մասերից Իսրայելը հավաքելու և հյուսիսային երկրից տասը ցեղերին առաջնորդելու բանալիները:

Դրանից հետո, Եղիասը հայտնվեց, և հանձնեց Աբրահամի ավետարանի տնտեսությունը, ասելով, որ մեզանով և մեր հետնորդներով պիտի օրհնվեն մեզ հաջորդող բոլոր սերունդները:

Այս տեսիլքը փակվելուց հետո, մեկ այլ՝ մեծ և փառահեղ տեսիլք պայթեց մեր վրա. քանզի Եղիա մարգարեն, որը երկինք էր վերցվել առանց մահ ճաշակելու, կանգնեց մեր առջև, և ասաց.

Ահա, ժամանակը լիովին մոտեցել է, որը խոսվել է Մաղաքիայի բերանով – վկայելով, որ նա [Եղիան] պետք է ուղարկվի, նախքան Տիրոջ գալստյան մեծ և ահեղ օրը –

Հայրերի սրտերը դեպի զավակները դարձնելու համար, և զավակներինը՝ դեպի հայրերը, չլինի թե ողջ երկիրը զարկվի անեծքով –

Հետևաբար, այս տնտեսության բանալիները հանձնվում են ձեր ձեռքը. և դրանով դուք կարող եք իմանալ, որ Տիրոջ մեծ և ահեղ օրը մոտ է, նույնիսկ դռների մոտ: (Վ և Ու110.1–16:)

Դա տեղի ունեցավ: Այդ նշանակալից դեպքը աննկատ մնաց աշխարհի համար, բայց այն ազդեցություն կունենա երկրի վրա երբևէ ապրած բոլոր հոգիների ճակատագրի վրա: Աստիճանաբար իրադարձություններ տեղի ունեցան: Եկեղեցին դարձավ տաճար կառուցող եկեղեցի:

Աշխարհով մեկ, կարծես թե պատահաբար, տարբեր տեղերում սկսեցին առաջ գալ ծագումնաբանական հետազոտություններով հետաքրքրվող մարդիկ, կազմակերպություններ և ընկերություններ: Եվ այդ ամենը հաջորդեց Եղիայի Կիրթլենդ Տաճարում հայտնվելուն:

Այդ նույն օրից՝ 1836թ ապրիլի 3-ից, որդիների սրտերը սկսեցին դառնալ դեպի իրենց հայրերը: Դրանից հետո արարողությունները ոչ թե ժամանակավոր, այլ հարատև բնույթ ստացան: Կնքելու զորությունն արդեն մեզ հետ էր: Երկնքից տրված բոլոր

լիազորություններից դա ամենաարժեքավորն էր: Այդ զորությունը իմաստ և հավերժական հարատևություն է հաղորդում թեողջերի, թե° մահացածների համար պատշաճ իշխանությամբ կատարվող բոլոր արարողություններին:

Ամեն ինչ կարգով է արվում

Կիրթլենդ Տաճարի ողբերգական իրադարձություններից հետո առաջացած դժվարություններն ու հետապնդումները ստիպեցին Սրբերին տեղափոխվել: Որտեղ էլ որ նրանք հիմնավորվել են, Տերը նրանց տաճարներ կառուցելու ծրագրեր է հայտնել: Այդպես եղավ ինչպես Ինդիփենդենսում, այնպես էլ Միսսուրի նահանգի Ֆար Վեսթում: Այդ ժամանակահատվածում հալածանքների անընախադեպ տարափ տեղաց Սրբերի վրա, և, ի վերջո, նրանք փախան դեպի Նավու, Իլինոյզի նահանգ: Այդտեղ կրկին տրվեց հայտնություն և Տիրոջ տուն կառուցելու պատվիրան:

Տերը բացատրեց, որ այդ տունը կառուցելու նպատակը արարողությունների հայտնություններն էին: «Եվ ճշմարիտ ասում եմ ձեզ. Թող այդ տունը կառուցվի իմ անվան համար, որ նրանում ես կարողանամ հայտնել իմ արարողություններն իմ ժողովրդին. Քանզի ես կամենում եմ իմ եկեղեցուն հայտնի դարձնել այն բաները, որոնք թաքնված էին պահվել աշխարհի հիմնադրումից ի վեր, բաներ, որոնք վերաբերում են ժամանակների լրության տնտեսությանը» (Վ և Ու 124.40-41):

Նա նշում է, որ տաճարը կլինի մի վայր, որտեղ ձեր օծումները, և ձեր լվացումները, և ձեր մկրտությունները մահացածների համար, և ձեր հանդիսավոր ժողովները, և ձեր հիշատակները՝ ձեր զոհաբերությունների համար, Ղևիի որդիների միջոցով, և ձեր պատգամների համար, ձեր ամենասուրբ վայրերում, որոնցում դուք ստանում եք ձեր հաղորդակցությունները, և ձեր կանոններն ու դատաստանները՝ Սիոնի հայտնությունների և հիմնադրման սկզբի համար և նրա բոլոր քաղաքացիների փառքի, պատվի ու օժտման համար, կարգված են իմ սուրբ տան արարողությամբ, որն իմ ժողովրդին միշտ պատվիրվել է կառուցել իմ սուրբ անվան համար» (Վ և Ու 124.39):

Եկեղեցում կատարվող ծեսերից են՝ մկրտությունը, հաղորդությունը, մանուկների օրհնումն ու անվանակոչումը, ծառայությունը հիվանդներին, Եկեղեցական կոչումների համար ձեռնադրումը, քահանայության պաշտոններին կարգելը: Բացի այս ամենից կան նաև ավելի բարձրակարգ արարողություններ, որոնք կատարվում են տաճարներում: Դրանցից են լվացումը, օծումը, օժտումը և կնքման արարողությունը, որը հայտնի է որպես տաճարային ամուսնություն:

Սելեստիալ Սենյակ, Սոլթ Լեյքի Տաճար

Որքա՞ն կարևոր են արարողությունները մեզ համար, որպես Եկեղեցու անդամների:

Կարո՞ղ եք արդյոք երջանիկ լինել, կարո՞ղ եք արդյոք փրկվել, կարո՞ղ եք արդյոք

համբարձվել առանց դրանց: Պատասխան. դրանք ավելի են, քան նպատակահարմար կամ ցանկալի, ավելի են, քան անհրաժեշտ: Դրանք նույնիսկ ավելի են, քան էական կամ կենսական: Դրանք *վճռորոշ* են մեզանից յուրաքանչյուրի համար:

Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է, որ իրեն հաճախ են դիմել հետևյալ հարցով.

> «Արդյո՞ք մենք չենք կարող փրկվել, առանց ստանալու այդ բոլոր արարողությունները և այլն»: Ես կասեի, ոչ, դա չի լինի լիակատար փրկություն: Հիսուսն ասաց. «Իմ Հոր տանը շատ բնակարաններ կան, և ես գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու»: *Տուն* բառը, ինչպես օգտագործվել է այստեղ, պետք է թարգմանված լիներ արքայություն. և յուրաքանչյուր ոք, ով համբարձվել է մինչև բարձրագույն բնակարանը, պետք է ապրի երկնային օրենքով, և նաև, հնազանդվի ամբողջ օրենքին: (*History of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* ed. B. H. Roberts, 7 vols. [Salt Lake City: The Church of Jesus Christ of Latter-day Saints, 1949], 6:184.)

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ասել է.

> Անկախ նրանից, թե ինչ պաշտոն դուք ունեք այս Եկեղեցում, կարող եք լինել՝ առաքյալ, հայրապետ, ավագ քահանա կամ կրել որևէ այլ պաշտոն, և այնուամենայնիվ, դուք չեք կարող ընդունել քահանայության լրիվությունը, մինչև չայցելեք տաճար և չընդունեք այն ծեսերը, որոնց մասին խոսում է մարգարեն: Տիրոջ տաճարից դուրս ոչ մի մարդ չի կարող ընդունել քահանայության լրիվությունը (Joseph Fielding Smith, *Elijah the Prophet and His Mission* [Salt Lake City: Deseret Book Co., 1957], page 46):

Մենք արդեն խոսել ենք տաճարում կատարվող բարձրագույն արարողությունների մասին: Դրանցից մեկը օժտումն է: Օժտել, նշանակում է հարստացնել, տալ մեկին մի բան, որը շատ թանկարժեք է և հարատև: Տաճարի օժտումը հարստացնում է երեք ձևով: ա) Արարողությունն ընդունող անձնավորությանը տրվում է զորություն Աստծուց. «Ընդունողները օժտվում են զորությամբ երկնքից»: բ) Ընդունողը օժտվում է նաև տեղեկություններով և գիտելիքով. «Նրանք գիտելիք են ստանում Տիրոջ նպատակների և ծրագրերի վերաբերյալ» (Mormon Doctrine, page 227.): գ) Ջոհասեղանի

առաջ կնքվելով, անձը, որպես իր օժտման բաղկացուցիչ մաս, ընդունում է փառավոր օրհնություններ, զորություններ և պարգևներ:

Օժտման վերաբերյալ Գոյություն ունի երկու հրատարակված սահմանում կամ բացատրություն. առաջինը տրվել է Նախագահ Բրիգամ Յանգի կողմից:

> Թույլ տվեք տալ համառոտ սահմանում: Ձեր օժտումը, դա Տիրոջ Տան բոլոր արարողություններն ընդունելն է, որոնք անհրաժեշտ են ձեզ այս կյանքից հեռանալուց հետո, որպեսզի հնարավորություն ունենաք վերադառնալ Հոր ներկայության մեջ, որպեսզի ժամապահ հրեշտակների մոտով անցնելիս ի վիճակի լինեք հաղորդել նրանց Սուրբ Քահանայության նշանաբառերը, նշանները, խորհրդանիշները, և ձեռք բերել ձեր հավերժական համբարձումը, հակառակ երկրին ու դժոխքին (Discourses of Brigham Young, comp. John A. Widtsoe [Salt Lake City: Deseret Book Co., 1971], page 416.):

Երեց Ջեյմս Ի. Թալմիջն օժտումը նկարագրել է այսպես.

> *Տաճարային Օժտումը*, ինչպես որ մատուցվում է ժամանակակից տաճարներում, տեղեկություններ է պարունակում անցած ժամանակաշրջանների կարգի և դրանց նշանակության, ներկայի, որպես մարդկային պատմության մեծագույն և կարևորագույն դարաշրջանի վերաբերյալ: Ուսուցման այդ ընթացքը ընդգրկում է արարման ժամանակաշրջանի ամենանշանակալից իրադարձությունների մանրամասն նկարագրությունը, մեր նախածնողների վիճակը Եդեմական Պարտեզում, նրանց անհնազանդությունը և դրան հաջորդող արտաքսումը այդ երանելի բնակավայրից, նրանց վիճակը միայնակ և խավար երկրի վրա, դատապարտված ապրելու սեփական վաստակով և քրտինքով, փրկագնման ծրագիրը, որի շնորհիվ մեծ օրինազանցությունը կարող է քավվել, ուրացության երկարատև ժամանակաշրջանը, Ավետարանի վերականգնումը իր նախասկզբնական զորությամբ և արտոնություններով, մահկանացու կյանքի ընթացքում անձնական մաքրությանը և ճշմարտությանը հավատարիմ լինելու լիակատար և պարտադիր պայմանը և Ավետարանի պահանջների պարտադիր կատարումը (James E. Talmage, *The House of the Lord* [Salt Lake City: Bookcraft, 1962], pages 99–100; այսուհետև մեջ է բերված, որպես *The House of the Lord*.):

Երեց Թալմիջի այս բացատրությունը պարզաբանում է, որ երբ դուք ընդունում եք ձեր օժտումները, դուք ստանում եք տեղեկություններ Տիրոջ ծրագրերի և նպատակների վերաբերյալ, կապված

Սելեստիալ Սենյակ, Սան Դիեգո Կալիֆորնիա Տաճար

երկրի արարման և բնակեցման հետ: Ձեզ կսովորեցնեն, թե ինչ պետք է անել համբարձում ձեռք բերելու համար:

Օժտման օրհնությունը անհրաժեշտություն է լիակատար համբարձման համար: Յուրաքանչյուր Վերջին Օրերի Սուրբ պետք է ձգտի արժանի լինել այդ օրհնությանը և ձեռք բերել այն:

Լվացման և օծման արարողությունները տաճարում հաճախ անվանում են սկզբնական արարողություններ: Դրանց մասին բավական է ասել հետևյալը. լինելով օծման բաղկացուցիչ մասը, այդ արարողությունները՝ լվացումն ու օծումը, լինելով էությամբ խորհրդանշական, խոստանում են որոշակի օրհնություններ այս կյանքի համար, ինչպես նաև օրհնություններ ապագայի համար:

Այդ արարողությունների կապակցությամբ, տաճարում ձեզ հանդիսավորությամբ կհագցնեն հատուկ ներքնազգեստ և դրա հետ կապված դուք կստանաք զարմանալի օրհնությունների խոստում: Կարևոր է, որ դուք ուշադիր լսեք և փորձեք մտապահել այդ արարողությունների ժամանակ տրված խոստումները և այն պայմանները, որոնց դեպքում դրանք կիրականանան:

Կնքման արարողությունը դա այն ծեսն է, որը կապում է ընտանիքները հավերժական կապերով: Տաճարային ամուսնությունը կնքման արարողություն է: Երբ զույգը քաղաքացիական ամուսնությունից հետո կնքվում է տաճարում, այն երեխաները, որոնք ծնվել են մինչ այդ, և հետևաբար, չեն ծնվել ուխտի մեջ, իրենց ծնողների հետ կնքվում են կարճ և սրբազան արարողությամբ:

Խնդրում եմ հետևեք, որ ձեր կյանքը լիովին կարգավորված լինի: Դա միայն գալիս է ձեր տաճարային օրհնությունները, արարողություններն ընդունելուց, քանի որ «որովհետև այդ ծեսերում է հայտնվում աստվածապաշտության զորությունը (Վ և Ու 84.20):

Սրբազան ուխտերը

Հայտնության մեջ, որն այժմ հայտնի է որպես Վարդապետություն և Ուխտերի 132 բաժին, Տերը հայտնում է.

> «Քանզի ահա, ես հայտնում եմ քեզ նոր և հավիտենական ուխտը. և եթե դու չմնաս այդ ուխտի մեջ, ապա դու նզովված ես. քանզի ոչ ոք չի կարող մերժել այս ուխտը և թույլ տրվել իմ փառքը մտնել:
>
> Քանզի բոլորը, ովքեր կամենում են օրհնություն ունենալ իմ ձեռքից, պիտի մնան օրենքի մեջ, որը նշանակվել է այդ օրհնության համար, և նրա պայմանների մեջ, ինչ պես որ հաստատվել է աշխարհի հիմնադրումից առաջ»: (ՎևՈւ 132.4—5)

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը նոր և հավիտենական ուխտի սահմանումը տվել է հետևյալ խոսքերով.

> Ի՞նչ է նոր և հավիտենական ուխտը: Ցավով պետք է նշեմ, որ կան Եկեղեցու անդամներ, որոնց շեղել և սխալ տեղեկություններ են տվել նոր և հավիտենական ուխտի էության վերաբերյալ: *Նոր և հավիտենական ուխտը, դա ավետարանի բոլոր ուխտերի և պարտավորությունների ընդհանուր գումարն է* (Joseph Fielding Smith, Doctrines of Salvation, 3 vols. [Salt Lake City: Bookcraft, 1954–56], 1:156; այսուհետև մեջ է բերված որպես *Doctrines of Salvation*.):

Այս ուխտը իր մեջ ներառում է ավետարանի բոլոր արարողությունները, որոնցից բարձրագույնները կատարվում են տաճարում: Կրկին անդրադառնանք Նախագահ Սմիթի խոսքերին.

> Ահա նոր և հավիտենական ուխտի պարզ և մանրամասն սահմանումը: *Այն իր մեջ պարունակում է ամեն ինչ՝ ավետարանի լրիվությունը*: Այսպիսով պատշաճ ձևով կատարված ամուսնությունը, մկրտությունը, քահանայության ձեռնադրումը և մնացածը՝ *բոլոր պայմանագրերը, պարտավորությունները, Հիսուս Քրիստոսի ավետարանին վերաբերվող բոլոր կատարումները, որոնք կնքված են խոստումի Սուրբ Հոգով* այստեղ տրված նրա օրենքի համաձայն, *համարվում են նոր և հավիտենական ուխտի բաղկացուցիչ մասը* (*Doctrines of Salvation*, 1:158):

Վերևում մեջբերված հատվածում (Վարդապետություն և Ուխտեր 132.4) Տերը հստակ պարզությամբ ասել է. «, որ ոչ ոք չի կարող մերժել այդ ուխտը և թույլ տրվել մտնել Իր փառքի մեջ:

Բոլոր նրանց, ովքեր գնում են տաճար, իրենց և ուրիշների համբարձմանը վերաբերող որոշակի ուխտեր կնքելու և պարտավորություններ ստանձնելու արտոնություն է տրված: Երեց Ջեյմս Ի. Թալմիջը գրել է.

> Օժտման արարողությունները իրենց մեջ մարմնավորում են որոշակի պարտավորություններ անձի կողմից, ինչպես՝ առաքինության և ողջախոհության օրենքը խստորեն պահպանելու ուխտը և խոստումը, գթասիրտ, բարյացակամ, հանդուրժողական և մաքուր լինելը, շնորհները և նյութական միջոցները ճշմարտության տարածման գործին և մարդկային ցեղի վեհացման նպատակին նվիրաբերելը, ճշմարտության գործին նվիրվածության պահպանումը և ձգտումը ամեն ձևով նպաստել մեծ նախապատրաստությանը, որ երկիրը պատրաստ լինի ընդունելու իր Արքային՝ Տեր Հիսուս Քրիստոսին: Յուրաքանչյուր

ուխտի և դրա հետ կապված պարտավորության ընդունման հետ միասին հայտարարվում է խոստացված օրհնություն, որի իրականացումը կախված է պայմանների հավատարիմ կատարումից (*The House of the Lord*, page 100):

Մենք ուխտ ենք կապում Տիրոջ հետ՝ նվիրել մեր ժամանակը, շնորհները և միջոցները Նրա թագավորությանը:

Մենք ուխտյալ ժողովուրդ ենք: Մենք ուխտ ենք կապում տրամադրել մեր ունեցվածքը, մեր միջոցները՝ ժամանակը, դրամը, շնորհները երկրի վրա Աստծո արքայության նպատակների համար: Պարզ ասած՝ մենք բարին գործելու ուխտ ենք կապում: Մենք ուխտյալ ժողովուրդ ենք, և տաճարը մեր ուխտերի կենտրոնն է: Այն ուխտերի աղբյուրն է:

Եկեք տաճար: Դուք պետք է այցելեք տաճար: Այնտեղ, գործելով որպես փոխարինող մեկի համար, ով «վարագույրի այն կողմում» է, դուք հնարավորություն կունենաք վերանայելու այն ուխտերը, որոնք արդեն կապել եք ձեզ համար: Ձեր գիտակցության մեջ կամրանան Տիրոջ տանը ստացած մեծ հոգևոր օրհնությունները:

Եղեք հավատարիմ ավետարանի ուխտերին և արարողություններին: Ձեր կյանքի ընթացքում քայլ առ քայլ պատրաստվեք ընդունելու այդ սուրբ արարողությունները: Պատվեք դրանց հետ կապված ուխտերը: Այդպիսով դուք երջանիկ կլինեք:

Ձեր կյանքը այնուհետև կկարգավորվի՝ ամեն բան կդասավորվի պատշաճ հաջորդականությամբ և կարգով: Ձեր ընտանիքը կկապվի այնպիսի կապերով, որոնք երբեք չեն արձակվի:

Ուխտերի և արարողությունների մեջ են կենտրոնացած բոլոր օրհնությունները, որոնք դուք կարող եք պահանջել սուրբ տաճարում: Անկասկած Տիրոջը հաճելի է, երբ մենք արժանի ենք «Ուխտերի պահապան» կոչմանը:

Ոչ առանց Ընդդիմության

Տաճարները Եկեղեցու հոգևոր զորության կենտրոնն են: Մենք պետք է գիտակցենք, որ հակառակորդը, մեր սուրբ և ոգեշնչված այդ աշխատանքին մասնակցելու ձգտման ճանապարհին պայքարելու է մեր դեմ, թե որպես Եկեղեցի, թե որպես անհատ: Այդ խոչընդոտները կարող են լինել բազմապիսի՝ սկսած հետապնդումներից, ինչպես վաղ ժամանակներում, մինչև աշխատանքի հանդեպ անտարբերությունը: Վերջինս, թերևս տաճարային աշխատանքի դեմ ուղղված դիմադրության ամենավտանգավոր և ամենաթուլացնող ձևն է:

Տաճարային աշխատանքն այդպիսի դիմադրություն է առաջացնում, քանի որ այն Վերջին Օրերի Սրբերի և ամբողջ Եկեղեցու համար հանդիսանում է հոգևոր ուժի հզոր աղբյուր:

Նախագահ Ջորջ Ք. Քենոնը Լոգան Տաճարի անկյունաքարի օծման ժամանակ արեց հետևյալ հայտարարությունը.

> Յուրաքանչյուր հիմնաքար, որը դրվում է Տաճարի հիմքում և յուրաքանչյուր ավարտված Տաճար, որը կառուցվել է Տիրոջ կողմից Իր Սուրբ Քահանայությանը հայտնած կարգով, նվազեցնում է երկրի վրա Սատանայի զորությունը և ավելացնում է Աստծո և Աստվածապաշտության զորությունը, շարժում է երկինքները զորավոր ուժով հանուն մեզ, արթնացնում և մեզ վրա է կանչում Հավերժական Աստվածների և նրանց ներկայության մեջ գտնվողների օրհնությունները (“The Logan Temple”, *Millenial Star* , 12 Nov. 1877, p.743.):

Երբ Եկեղեցու անդամները մտահոգված են կամ պատասխանատու որոշումները ծանրացած են գիտակցության վրա, նրանք սովորաբար գնում են տաճար: Դա մեր հոգսերը տանելու շատ համապատասխան տեղ է: Տաճարում մենք կարող ենք ստանալ հոգևոր հեռանկարներ: Այնտեղ, տաճարի ծառայության ժամանակ, մենք «աշխարհից դուրս ենք»:

Այդ իրադարձությունների արժեքը կայանում է նրանում, որ մենք ուրիշների համար կատարում ենք մի բան, որը նրանք իրենց համար ի վիճակի չեն կատարելու: Որևէ մահացածի փոխարեն օժտում ստանալով, մենք ինչ-որ ձևով մի քիչ ավելի համարձակ ենք զգում Տիրոջից մեզ համար օգնություն խնդրելիս: Երբ ամուսնացած երիտասարդ զույգերը որոշումներ են կայացնում և տաճարի մոտ են ապրում, ապա շատ արժեքավոր կլինի մի նիստի մասնակցելը: Տաճարի հոգևոր մթնոլորտը ունի մաքրող և լուսաբանող հատկություն:

Երբեմն մեր գիտակցությունն այնքան է ծանրաբեռնված զանազան խնդիրներով և այնքան շատ բաներ են միանգամից ուշադրություն պահանջում, որ մենք պարզապես ի վիճակի չենք լինում հստակ մտածել և տեսնել: Տաճարում կործանման փոշին կարծես անհետանում է, մառախուղն ու մշուշը կարծես պարզվում են, և մենք ի վիճակի ենք դառնում «տեսնելու» այնպիսի բաներ, որոնք չէինք տեսնում առաջ և մեր դժվարությունները լուծելու համար գտնվում է այնպիսի ճանապարհ, ինչպիսին մենք նույնիսկ չէինք պատկերացնում:

Տաճարի սուրբ ծեսերի աշխատանքներին մասնակցելու համար Տերը կօրհնի մեզ: Ստացված օրհնությունները դուրս կգան տաճարի

ծառայության սահմաններից: Մենք օրհնված կլինենք մեր բոլոր գործերում: Մենք իրավունք կստանանք ունենալու Տիրոջ միջամտությունը հոգևոր և աշխարհիկ մեր բոլոր գործերում:

Դեպի Վարագույրը

Մենք պետք է գիտակցենք, թե ինչու ենք տաճարներ կառուցում և, թե ինչու են մեզանից պահանջվում արարողությունները: Այնուհետև մեզ շարունակաբար ուսուցանում և լուսավորում են հոգևոր կարևորություն ունեցող հարցերում: Դա տրվում է տող առ տող, ցուցում առ ցուցում, մինչև որ մենք ձեռք կբերենք լույսի և գիտության լիություն: Եվ այդ ձեռք բերածը դառնում է հզոր պաշտպանություն մեզ համար՝ մեզանից յուրաքանչյուրի համար: Դա պաշտպանություն է նաև Եկեղեցու համար:

Ոչ մի աշխատանք չի պաշտպանում այս Եկեղեցին ավելի շատ, քան տաճարային աշխատանքը և դրան օժանդակող ծագումնաբանական հետազոտությունները: Ոչ մի աշխատանք չի բերում ավելի շատ հոգևոր մաքրություն: Ոչ մի աշխատանք մեզ չի պարգևում ավելի շատ զորություն: Ոչ մի աշխատանք չի պահանջում արդարության ավելի բարձր չափանիշներ:

Տաճարում կատարած մեր աշխատանքը ծածկում է մեզ վահանով և պաշտպանությամբ, թե որպես անհատ, և թե որպես ժողովուրդ:

Տաճարային արարողությունների միջոցով է, որ մենք Նրա հետ ուխտի մեջ ենք մտնում: Այնտեղ է, որ մենք դառնում ենք ուխտյալ ժողովուրդ:

Եթե մենք ընդունենք տաճարային ծեսերի աշխատանքի վերաբերյալ հայտնությունը և կնքենք մեր ուխտերը առանց վերապահման ու արդարանալու, ապա Տերը կպաշտպանի մեզ: Մենք կստանանք բավականաչափ ոգեշնչում, որպեսզի հաղթահարենք կյանքի դժվարությունները:

Տաճարների հետ կապված աշխատանքը ճշմարիտ է: Այն հայտնվել է վարագույրի այն կողմից և հայտնությունը շարունակվում է:

Եկեղեցու յուրաքանչյուր անդամ կարող է ստանալ անհատական հայտնություն տաճարային աշխատանքի վերաբերյալ:

Ուրեմն, եկեք տաճար. եկեք և պահանջեք ձեզ համար նախատեսված օրհնությունները: Սա սրբազան աշխատանք է:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 02367 93201 5
36793 201